

ՉԱՐԳԱՅՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՍՈՒՄԸ

1215 O Street, MS 7-40
Sacramento, CA 95814
TTY: 711
(833) 421-0061



27 յունուար 2023

ՈՒՂՈՒԲԱԾ՝ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆՆԵՐՈՒՄ

ՆԻԻԹ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԲԱԾ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓՈՐՁ ԾՐԱԳԻՐ ԱՅՆ ՉԱՓԱՅԱՍ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԵՏ ԿԸ ԲՆԱԿԻՆ

Յունիս 2022-ին զարգացման ծառայութիւններու պետական պիւտճէի Թրէյլըրի օրինագիծը՝ SB 188 (49-րդ գլուխ, 2022 թուականի Կանոնադրութիւն), աւելցուց Բարեկեցութեան եւ հաստատութիւններու օրէնսգիրքի թիւ 4688.06 բաժինը՝ ստեղծելով Ընտանիքի Համակարգուած Աջակցութեան (CFS) ծառայութիւններու փորձ ծրագիրը: Այս բաժինը կը ճանչնայ հաշմանդամութիւն ունեցող չափահասներուն իրաւունքը՝ իրենց ընտանեկան տան մէջ բնակելու, ինչպէս նաեւ կը ճանչնայ այն փաստը, որ զարգացման հաշմանդամութիւն ունեցող չափահասները եւ անոնց ընտանիքները կրնան կարիքը ունենալ CFS ծառայութիւններուն, որոնք պատշաճեցուած են յաճախորդին յատուկ կարիքներուն եւ կը յարգեն ընտանիքին լեզուն, ցեղը եւ մշակոյթը:

CFS-ը ծառայութեան նոր ընտրանք մըն է, որ մշակուած է այն չափահասներուն համար, որոնք ծառայութիւն կը ստանան շրջանային կեդրոնի մը կողմէ եւ կ'ընտրեն իրենց ընտանեկան տան մէջ բնակիլ: CFS ծառայութիւններու փորձ ծրագիրը կը միտի բարելաւել ծառայութիւններու եւ աջակցութեան հաւասար հասանելիութիւնը եւ նուազեցնել ծառայութիւններու գնումի ցեղային տարբերութիւնները:

Այս ուղեցոյցին նպատակն է CFS ծառայութիւններու փորձ ծրագիրին գործադրութեան վերաբերեալ տեղեկութիւններ տրամադրել: Նահանգային փորձ ծրագիրը պիտի սկսի յունուար 2023-ին: Փորձ ծրագրի ընթացքին Չարգացման ծառայութիւններու բաժանմունքը (Բաժանմունք) պիտի հաւաքէ տեղեկութիւններ՝ գնահատելու ծրագիրին արդիւնաւետութիւնը, ինչպէս նշուած է այս ուղեցոյցին մէջ:

CFS ծառայութեան նկարագրութիւն եւ սակեր

Ընդունուած CFS մատուցողները պետք է շրջանային կեդրոններուն հաշուեցոյց դրկեն՝ գործածելով 076 ծառայութեան քոտը: CFS ծառայութեան եւ CFS մատուցողներու նուազագոյն որակումներու նկարագրութիւնը նշուած է Ա. յաւելումներին մէջ: Նուազագոյն որակումներու բացառութիւնները կրնան շրջանային կեդրոնին կողմէ ներկայացուիլ Բաժանմունքին՝ քննարկումի համար: Բացառութիւններու դասական ձեւաթերթիկ մը պիտի ներկայացուի Շրջանային կեդրոնին հիմնական եւ երկրորդական CFS կապերուն:

Բաժանմունքը ճշդած է CFS-ի սակերը, որոնք կարելի է գտնել [այստեղ](#): Բացի անկէ, իւրաքանչիւր ծառայութիւն մատուցող, որ կը գոհացնէ ամսական գեկուցումի բոլոր պահանջները, իրաւասու կը դառնայ CFS-ի փորձ ծրագրի գործադրութեան խրախուսական վճարումներ ստանալու: Այս վճարումները կը հաշուընդին նախորդ ամսուան համար CFS գնահատումներու եւ ծառայութիւններուն համար գանձուած տոլարի ընդհանուր գումարի 11,1 տոկոսով: Օրինակ մը կարելի է գտնել Բաժանմունքի [CFS ծառայութիւններու կայքէջին](#) վրայ գտնուող CFS-ի Յաճախակի ուղղուած հարցումներու բաժինին մէջ: Չեկուցումի պահանջները արդէն իսկ կը մշակուին եւ վերջնականացուելէ ետք, Բաժանմունքը դասական ձեւաթերթիկը պիտի բաժնէ Շրջանային կեդրոններուն, որպէսզի մատուցողները զայն օգտագործեն՝ գեկուցումներ ներկայացնելու համար:

«Ստեղծել համագործակցութիւններ, աջակցիլ ընտրանքներու»

Շրջանային կեդրոնի գործադիր տնօրէններ
27 յունուար 2023
Բ. Էջ

CFS-ի գնահատումները պէտք է արտօնուին Շրջանային կեդրոններու կողմէ առնուազն վեց ժամ եւ առաւելագոյնը 12 ժամ տեւողութեամբ:

CFS մատուցողներու ընդունելութիւն եւ CFS իրազեկման ծրագիր

Շրջանային կեդրոնները պէտք է ամէն ջանք գործադրեն՝ աջակցելու ապագայ մատուցողներ ընդունելու գործընթացին մէջ, եւ ձգտին մատուցողներու այլազան խումբ մը աշխատանքի ընդունիլ:

Տրուած ըլլալով, որ CFS-ը նոր ծառայութիւն է, Շրջանային կեդրոնները պէտք է CFS-ը ծանուցելու ծրագիր մշակեն, իրենց ընտանիքներուն հետ ապրող չափահաս յաճախորդներուն եւ հաւանական մատուցողներուն համար: Ծրագիրը պէտք է ներկայացնէ, թէ Շրջանային կեդրոնը ինչպէ՛ս պիտի օգտագործէ ներկայ եւ նոր համայնքային կապերը, ինչպէս՝ վաճառողներու խորհրդատուական յանձնախումբերը եւ յաճախորդներու եւ ընտանեկան խումբերը՝ անոնց տեղեկացնելու նոր առիթին մասին: Բաժանմունքը մշակած է տեղեկատուական թերթիկներ՝ Շրջանային կեդրոններուն օգնելու, որ յաճախորդներուն եւ հաւանական մատուցողներուն տեղեկացնեն CFS ծառայութիւններուն մասին (Բ. յաւելուած): Կը քաջալերենք, որ Շրջանային կեդրոնները տեղեկատուական թերթիկներուն վրայ իրենց նշանները եւ կապի տուեալները աւելցնեն, զանոնք իրենց կայքէջին վրայ տեղադրեն եւ զանոնք հիմնական շփման կէտերուն բաժնեն:

Ուղղորդումի եւ գնահատումի գործիք

Բաժանմունքը ծառայութիւններ համակարգողներուն եւ CFS մատուցողներուն համար ստեղծած է ուղղորդումի եւ գնահատումի դասական գործիք՝ գործածելու յաճախորդներուն CFS-ի ուղղորդելու եւ գնահատելու համար (Գ. յաւելուած): Զայլ առ քայլ հրահանգները ներկայացուած են ձեւաթերթիկին վրայ: Բաժանմունքը նաեւ դասական գործիք մը մշակած է CFS-ի մատուցողներուն՝ յաճախորդին յառաջընթացին մասին Շրջանային կեդրոններուն զեկուցելու համար (Դ. յաւելուած):

Յաճախորդին/ընտանիքին գոհունակութիւնը չափելու գործիք

Բաժանմունքը պիտի գնահատէ յաճախորդներուն փորձառութիւնը՝ CFS-ին մասնակցելու ընթացքին: Ծառայութեան համակարգողները պարտաւոր են փորձառութեան վերաբերեալ հարցաթերթիկը բաժնել CFS ստացող յաճախորդներուն եւ ընտանիքներուն՝ CFS-ին արձանագրուելէ 30 օրուան ընթացքին: Յետագայ հարցաթերթիկները պիտի տրամադրուին Բաժանմունքին կողմէ, իսկ բոլոր հարցաթերթիկներուն պատասխանները ուղղակի Բաժանմունքին պիտի ներկայացուին: Բաժանմունքը պատասխաններու գաղտնիութիւնը կը պահպանէ: Շրջանային կեդրոնի հիմնական եւ երկրորդական CFS կապերը պիտի ստանան հրահանգներ, թէ ինչպէ՛ս մուտք գործեն եւ ամբողջացնեն հարցաթերթիկը:

Շրջանային կեդրոնի եռամսեայ զեկուցումի գործիք

Շրջանային կեդրոններէն պիտի պահանջուի եռամսեայ զեկուցումներ ներկայացնել CFS ծառայութիւններու փորձ ծրագրի իրականացման վերաբերեալ: Եռամսեայ զեկուցումի հարթակի յղումը պիտի տրամադրուի Շրջանային կեդրոնի հիմնական եւ երկրորդական CFS կապերուն:

Շրջանային կեդրոնի գործադիր տնօրէններ
27 յունուար 2023
Գ. Էջ

Հաճեցէ՛ք մինչեւ 3 փետրուար 2023 Բաժանմունքին տեղեկացնել ձեր շփման հիմնական եւ երկրորդական կետերուն մասին, եւ մինչեւ 17 փետրուար 2023՝ ներկայացուցէ՛ք ձեր ռազմավարութեան նախագիծը, որուն նպատակը պիտի ըլլայ աւելցնել CFS-ի մասին իրազեկումը ոչ-ճերմակամորթ եւ ոչ-անգլիախօս յաճախորդներուն եւ ընտանիքներուն մօտ: Այս տեղեկութիւնը պէտք է ներկայացուի Բաժանմունքին՝ ստորեւ նշուած Ե-նամակով:

Եթէ դուք յաճախորդ կամ կամ ընտանիքի անդամ մըն էք եւ հարցումներ ունիք այս ուղեցոյցին վերաբերեալ, հաճեցէ՛ք կապ հաստատել ձեր շրջանային կեդրոնի ծառայութիւններու համակարգողին հետ: Եթէ դուք Շրջանային կեդրոն մըն էք եւ հարցումներ ունիք այս ուղեցոյցին վերաբերեալ, հաճեցէ՛ք Ե-նամակ դրկել այս հասցէին՝ CFS@dds.ca.gov:

Յարգանք,

Բնագիրի ստորագրող՝

ԴՈԿՏ. ՎԻԶԻ Լ. ՍՄԻԹ
Փոխտնօրէն
Բաղաւաքականութեան եւ ծրագիրներու մշակումի

բաժնի յաւելումներ

cc: Շրջանային կեդրոնի վարիչներ
Յաճախորդներու ծառայութիւններու շրջանային կեդրոնի տնօրէններ
Շրջանային կեդրոնի համայնքային ծառայութիւններու տնօրէններ
Շրջանային կեդրոնի գործակալութիւններու ընկերակցութիւն
Նենսի Պարկմըն, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք
Պրայըն Ուինֆիլտ, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք
Գարլա Քաստանիետա, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք
Էրնի Զրուզ, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք